

Ս. Մանուկյան, Խ. Գյուլնազարյան

ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆԻ ԱՐՁԱԿԸ

Հակոր Հակորյանն ընթերցող հասարակայնությանը հայտնի է առավելապես իբրև բանաստեղծ, իբրև հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր։ Հակորյանի բանաստեղծություններն ու պոեմները, որոնք թե՛ հեղինակի կենդանության օրով, թե՛ նրա մահից հետո բազմիցս հրատարակվել են հայերեն, ռուսերեն և եղբայրական ժողովուրդների մի շարք լեզուներով, դարձել են ո՛չ միայն մեր ռեսպուբլիկայի, այլև ողջ սովետական ժողովրդի սեփականությունը։ Հ. Հակորյանը իր արժանավոր տեղն է գրավել սովետական պոեզիայի վետերանների շարքում։ Հակորյանի պոեզիայի մասին թե՛ նախառևույցիոն և թե՛ սովետական մամուլում տպագրվել են բազմաթիվ գրախոսություններ, հոդվածներ, գրվել են մի շարք ծավալուն ուսումնասիրություններ։

Նույնը չի կարելի ասել անվանի գրողի արձակ ստեղծագործության մասին։ Թե՛ այդ ստեղծագործության հավաքման ու հրատարակման ասպարեզում, և թե՛ մասնավորապես, նրա գնահատման գաղափարական ու գեղարվեստական արժանիքների ու առանձնահատկությունների լուսաբանման ուղղությամբ դեռևս չեն ձեռնարկվել քիչ թե շատ լուրջ քայլեր։ Մինչդեռ Հ. Հակորյանի արձակ ստեղծագործությունը նրա բոցաշունչ ռևոլյուցիոն պոեզիայի սոսկ անկարևոր կցորդը չէ։ Այն ունի խոշոր նշանակություն ո՛չ միայն գրողի ստեղծագործական կյանքի մասին առավել ամբողջական գաղափար կազմելու, նրա աշխարհայացքի, քաղաքական-հասարակական հայացքների մեկնաբանման համար, որն ինքնին երկրորդական հարց չէ, այլև նշանակալից է որպես զուտ գեղարվեստական ստեղծագործություն, որը չի կորցրել իր ակտուալությունն ու հմայքը։

Այստեղից հետևում է, որ վաղուց հասունացել է ոչ միայն Հ. Հակորյանի արձակի հավաքման և բարեխիղճ ու հնարավորին չափ լիակատար հրատարակման հարցը, այլև այդ արձակի ուսումնասիրության և ըստ արժանվույն գնահատման խնդիրը։

Այդ ուղղությամբ մի փորձ է ներկա հոդվածը, որը, անշուշտ, չի կարող հարցի ամբողջական ու լիակատար պատասխանը տալու հավակնություն ունենալ։

* * *

Հ. Հակորյանի արձակը բավական բազմաժանր է։ Նա գրել է պատմվածքներ, ակնարկներ, հուշեր, ինքնակենսագրություն, հրապարակախոսական և գրականագիտական հոդվածներ։

Սակայն, պետք է ասել, որ Հ. Հակորյանի արձակ երկերի գեղարվեստական առանձնահատկություններից մեկը հենց այն է, որ դրանք, բացառությամբ քաղաքական-հրապարակախոսական և գրականագիտական հոդվածների, դրժվար է հաստատորեն տեղավորել այս կամ այն գրական ժանրի շրջանակներում։

Հակոբյանի հուշը՝ այս կամ այն ունույնություն գործչի, կամ գրողի մասին, դուրս է գալիս մեմուարային ժանրի սահմաններից և որոշ իմաստով մոտենում է պատմվածքին: Նրա պատմվածքը՝ լիրիկական զեղումների, պոռթկումների պահին հնչում է որպես արձակ բանաստեղծություն:

Հ. Հակոբյանի ինչպես ողջ ստեղծագործության, այնպես էլ արձակի մեջ ամենաընդգծվածը ունույնություն պաթոսն է, նույն պաթոսը, որ այնքան հորդաբուխ կերպով ցայտում է նրա բանաստեղծություններից: Ռեույնություն պաթոսը Հակոբյանի արձակին տալիս է հրապարակախոսական այրող շունչ, այդ արձակում հնարավոր չէ գտնել որևէ երկ, ուր պատկերված կերպարի կողքին ընթերցողը չտեսնի հեղինակին, չզգա նրա կրակոտ հոգին, նրա անսահման սերը ունույնության մարտիկների և այրող ատելությունը ունույնության թշնամիների նկատմամբ: Այս տեսակետից Հակոբյանի արձակը շատ թելերով է կապվում մեծ ունույնություն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի գեղարվեստական հրապարակախոսական արձակին:

Հ. Հակոբյանի գեղարվեստական արձակի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն միանգամայն հեռու է վերացականությունից. ավելին. գրեթե առանց բացառության նրա բոլոր պատմվածքներում մենք տեսնում ենք կոնկրետ պատմական անձնավորություններ և իրադրություններ: Թերևս մասամբ էլ սրանով պետք է բացատրել ինքնակենսագրական բնույթի զեղումների առատությունը այդ երկերի մեջ:

Այժմ տեսնենք, թե արձակի ինչպիսի ժառանգություն է թողել Հ. Հակոբյանը և քննենք այդ ժառանգությունը:

* * *

Հ. Հակոբյանի գրական ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում նրա պատմվածքները, որոնց մի մասը գրված է հեղինակի մանկության ու պատանեկության տարիների հիշողությունների հիման վրա, իսկ մնացածը նվիրված է Անդրկովկասում, մասնավորապես Թիֆլիսում, ծավալված ունույնություն շարժման այս կամ այն դրվագի գեղարվեստական արտացոլմանը:

Ծանոթանալով Հ. Հակոբյանի հարուստ արխիվում պահվող փաստաթղթերին, ընթերցողն առաջին հերթին գալիս է մեկ եզրակացության, այն է՝ Հ. Հակոբյանը դեռևս մանկուց ունեցել է զարմանալի զգայուն ու տպավորվող խառնվածք և իր տպավորությունները թղթին հանձնելու անզուսպ մղում ու կարողություն: Այդ են վկայում հեղինակի «Հիշատակարանները»¹, որոնց մեջ նա գրի է առել իր կյանքի դեպքերը՝ սկսած 1884 թվականից, այսինքն՝ 18 տարեկան հասակից, մինչև 1894 թվականը: Այդ «Հիշատակարաններ»-ում Հ. Հակոբյանը հանդես չի գալիս որպես առօրյական դեպքերի սոսկ արձանագրող: Ընդհակառակը, այդ դեպքերը նա ընկալում և շատ հաճախ վերարտադրում է բանաստեղծական հույզով. պատահական չէ, որ հենց նույն «Հիշատակարաններ»-ում ենք հանդիպում Հ. Հակոբյանի բանաստեղծական առաջիս փորձերին, բանաստեղծություններ, որոնց թիվը հարյուրից անցնում է:

¹ Այդ «Հիշատակարաններ»-ից որոշ հատվածներ, համառոտ տեղեկություններով, տպագրել է Աս. Ասատուրյանը՝ «Սովետական դրականություն և արվեստ» ամսագրում, 1945, № 5, էջ 68—75:

«Հիշատակարաններ»-ում, ապա և հետագայում վաղ տարիների տպավորությունների հիման վրա գրած գործերում Հ. Հակոբյանի գրիչը բանաստեղծական-հուզական շեշտեր է ստանում, մասնավորապես, երբ նա անդրադառնում է գեղարվեստի գնահատման հարցերին, ուղղակի բանաստեղծական ընդհանրացումների է հասնում նա, օրինակ, երբ խոսում է հանճարեղ դերասան Ադամյանի խաղի մասին: Ընթերցողի աչքի առաջ կանգնում է Ադամյանը ոչ միայն որպես անկրկնելի արտիստ, այլև զգում էս, թե որքան խորն է հասկացել պատանի Հակոբյանը թատերական արվեստի յուրաքանչյուր մանրամասնություն: Կարելի է ասել, որ Ադամյանը գծվում է որպես գեղարվեստական երկի լիարյուն կերպար: Զարմանալի հուզիչ ու գրավիչ են այն էջերը, որտեղ Հ. Հակոբյանը խոսում է հայ երաժշտական արվեստի, մասնավորապես երաժշտապետ Քրիստափոր Կարա-Մուրզայի մասին, որի կազմած խմբում նա եղել է մեներգիչ: Արձակ բանաստեղծության նման են ընթերցվում հիշատակարանների այն հատվածները, որոնցում Հ. Հակոբյանը խոսում է իր սիրո մասին՝ ռուս և հայ կլասիկ գրականության նկատմամբ: Նա առանց հիացմունքի, առանց անկեղծ ու համակիչ ռեկորդային չի կարողանում տալ Պուշկինի, Նեկրասովի, Աբովյանի, Նալբանդյանի, Զերնիշևսկու անունները: «Հիշատակարաններ»-ում գրի առնված նյութը, պատանի Հ. Հակոբյանի այդ վաղ տարիների տպավորություններն էլ հիմք են ծառայել մի շարք լիրիկական պատմըվածքների համար, որ հետագայում գրել է նա և որոնց մի մասը տպագրել է ժամանակի պարբերական մամուլում:

Այդպիսի պատմվածքներից է հայտնի «Ազատն աստվածը», որը հետաքրքրական է միաժամանակ մի քանի տեսակետից: Այստեղ լիրիկական խոսքը, հեղինակի հոգու զգացման ելևէջները միախառնվում են դեպքի նկարագրմանը: Մանկության օրերին հեղինակը մի անգամ լսել է Նալբանդյանի հռչակավոր երգը՝ «Ազատությունը», ահա պատմվածքի ողջ, այսպես ասած, բովանդակությունը: Բայց այդ դեպքը Հ. Հակոբյանը նկարագրում է այնքան ջերմ, այնքան զգացված, որ ընթերցողը մոռանում է կոնկրետ դեպքի նկարագրությունը և նրա աչքի առաջ բարձրանում է XIX դարի 90-ական թվականների ազատատենչ պատանին՝ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատի նկատմամբ պաշտամունքի հասնող իր ազնիվ սիրով:

Սակայն այս երկը նշանակալից է նաև այն տեսակետից, որ այստեղ Հ. Հակոբյանը փաստորեն գծում է իր անցած ուղին՝ դարավերջի ազատասիրական-դեմոկրատական հայացքներից մինչև բնական զարգացման ճանապարհով մարքսիզմի-լենինիզմի ռևոլյուցիոն աշխարհայացքին անցնելը, այսինքն՝ շեշտում է այն կապը, որ պատմականորեն կա Ռուսաստանի նախամարքսիստական շրջանի ռևոլյուցիոն-դեմոկրատական գործիչների և նրանց գաղափարական հետնորդների՝ բոլշևիկ-ռևոլյուցիոնների միջև: Այս տեսակետից շատ հետաքրքրական է պատմվածքի սիմվոլիկ ֆինալը:

«Թող անմոռաց մնա այն օրը պայծառ, երբ վաղ գարնանային մի առավոտ ես յարձրացած մեր թիկնու վրա, նրա մատաղ շիվերից տերևներ էի քաղում մորս շերամների համար, և երբ Ավետիք վարժապետի սրտաբուխ, հյութալի, քամք ձայնի հնչյունները գալիս էին բուրալի հոսանքով, ներս խուժում պատանյակ սրտիս խորքերը՝ այլևս այնտեղից դուրս չգալու մինչ այն օրը, երբ առաջին անգամ առնական հասակիս սկսեցի երգել միջազգային «Խնտերնացիոնալը»:

Ի՞նչ «Ազատն աստվածը» պատմվածքում լայնորեն արտահայտվում է

Հ. Հակոբյանի պատանեկական տարիներին ռեուլյուցիոն-ազատասիրական գաղափարներով տարված լինելու հանգամանքը, ապա նույն պատանեկական տպավորությունների հիման վրա գրված երկու այլ պատմվածքներում արտացոլված է գրողի խառնվածքի օրգանական տարրը կազմող ինտերնացիոնալիզմը: Մենք նկատի ունենք «Առաջին սերը» պատմվածքը, որը ժամանակին տպագրվելով մամուլում, իսկ 1951 թ. զետեղվելով Հ. Հակոբյանի երկերի ժողովածուի մեջ, լայնորեն հայտնի է մեր ընթերցող հասարակայնությանը և «Մանուկ հուշերից» պատմվածքը, որ անտիպ մնալով, դժբախտաբար, մինչ այժմ ծանոթ չէ ընթերցողներին:

«Առաջին սերը» պատմվածքը, ինչպես Հ. Հակոբյանի ուրիշ շատ երկեր, ընթերցողին տեղափոխում է անցյալ դարավերջի նահանգական կենտրոնը՝ Գանձակ (Եյանջա):

Պատմվածքի հերոսի՝ սուա հասարակ ու միամիտ աղջիկ Օլյա Բուլկովայի կյանքի ողբերգությունը նկարագրելով, Հ. Հակոբյանը բաց է անում բարքերի և սովորությունների ողջ այլանդակությունը, որ տիրում էր նահապետական հետամնաց քաղաքում, մասնավոր սեփականատիրական հարաբերությունների և ազգային նախապաշարումների պայմաններում: Հ. Հակոբյանը ցասումով է գրում այն հասարակության մասին, ուր ոտնահարվում է մարդու արժանապատվությունը, նրա զգացումը: Իրեն՝ Օլյային հեղինակը օժտել է մարդկային հոգու բոլոր լավ դժերով, համեստությամբ, խելքով, կենսասիրությամբ: Օլյայի ողբերգությունը հեղինակի համար հարազատի ողբերգություն է, որ Հակոբյանի սրտում ոչ թե նկուն տրամադրություններ է առաջացնում, այլ ցասում ու կռվելու կորով՝ ընդդեմ, ինչպես ինքն է ասում, «նզովված օրենքների»:

Եթե պաշտոնական կարծիքը՝ «նզովված օրենքները» անանցանելի պատենշ էին կանգնեցնում տարբեր ազգերի պատկանող ալնիվ հոգիների միջև, ապա աշխատավոր ժողովուրդների միանման բախտը, ընդհակառակը, տնքակտելի կապերով միացնում էր նրանց: Այս ճշմարտության գեղարվեստական արտացուման է նվիրված հենց Հ. Հակոբյանի «Մանուկ հուշերից» սքանչելի պատմվածքը: Պատմվածքի հերոսներին մենք ճանաչում ենք Հակոբյանի ինքնակենսագրությունից. դրանք գրողի ծնողներն են՝ մաշակար Յականն ու նրա կինը, ապա նրանց աշնան՝ ադրբեջանցի արհեստավոր Սոյունն իր ընտանիքով: Ցականի և Սոյունի մտերմությունը երկար պատմություն ունի և երկու ընտանիքներին է հասել որդոց-որդի: Հ. Հակոբյանի պատմվածքն այս քնքուշ բարեկամության քնարական ներբողն է: Հեղինակը լիրիկական սքանչելի տողերով է նկարագրում ավանդական բարեկամության կրակը հավերժորեն վառ պահելու երկու ընտանիքների ձգտումը:

Սակայն «շեյթանին»՝ ցարական միապետությանն ու նրա տեղական գործակալներին ձեռնադրել է հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը: Սրտի ցավով է խոսում այդ մասին հեղինակը.

«...Մի սև օր էլ պայթեց հայ-թուրքական կոտորածը... ու կտրեց երկու բարեկամների փոխադարձ կապը, էլ Դարաղ Հյուսեյինը (Սոյունի որդին) զառնուկ չէր ուղարկում մաշակար Մակիչի (Յականի որդու) երեխաներին և ոչ էլ վերջինիս ընտանիքը՝ գործած գուլպաներ նրա ընտանիքին, մորն ու հարսներին»:

Շեյթանը խեղդել, սպանել էր երկու բարեկամ ազգերի փոխադարձ հարաբերության հուսատու շատ ծիլեր...»:

Եվ միայն Սովետական ազատ երկրում են կրկին աճում ժամանակավորապես «խեղդված» այգ ծիլերը: Երկու հարևան ժողովուրդների բարեկամության կապն այս անգամ ամրանում է, դառնում հզոր ուժ, Սովետական կառավարության, Կոմունիստական պարտիայի ազգային իմաստուն քաղաքականության շնորհիվ:

Հակոբյանի այս պատմվածքների կապակցությամբ նշենք, որ ինչպես հայտնի է, Հոկտեմբերյան ռևոլյուցիայից առաջ, զգալով նոր զարգացող պրոլետարական գրականության հսկայական նշանակությունը մասսաներին ռևոլյուցիոն ոգով դաստիարակելու գործում, հայ բուրժուական, նացիոնալիստ «էսթետները» կատաղի պայքար են մղել այդ գրականության դեմ: Այդ պայքարի ձևերից մեկն էլ եղել է պրոլետարական գրականության գեղարվեստական արժանիքները ժխտելու տենդենցը, Ռուսաստանում տարածել են, թե Գորկու ստեղծագործությունը գեղարվեստորեն տուժում է իր սոցիալական բովանդակության պատճառով: Մեզանում Հ. Հակոբյանի պոեզիան գնահատել են որպես «անարվեստ», «տրաֆարետ», «ռիտորիկա»: Միայն բուլշևիկյան դրականագիտությունն է ըստ արժանվույն գնահատել նոր զարգացող պրոլետարական գրականության հսկայական նշանակությունը: Հ. Հակոբյանի հանրածանոթ պոեմների ու բանաստեղծությունների հետ միասին, կարդալով նրա «Ազատն աստվածը», «Առաջին սերը», «Մանուկ հուշերից» և մյուս պատմվածքները, ընթերցողը հասկանում է, թե որքան շինծու, տենդենցիոզ, սուտ ու պատիր են բուրժուական գաղափարախոսների կարծիքները պրոլետարական գրականության «գեղարվեստական թուլության» մասին:

Նշանակալից արժեք են ներկայացնում Հ. Հակոբյանի «Երկու ընկերներ», «Գիժ Գրիգոր» և մյուս պատմվածքները, որոնք նմանապես անտիպ են մինչև այժմ: Առաջինում միմյանց են հակադրվում, մի կողմից, ճարպակալած բուրժուան իր կեղծ ողորմածությամբ, մյուս կողմից՝ սոցիալական անարդարության զոհերը՝ «Երկու ընկերները», երկու հաշմանդամներ, Գորկու ռառերով ասած, «կյանքի հատակը» նետված մարդիկ, որոնք ցավով զսպելով հոգեկան տառապանքը ստիպված են մուրացիկի ձեռք մեկնել ատելի հարուստին:

«Գիժ Գրիգորը» պատմվածքն իր թեմայով շատ է մոտենում Հ. Թումանյանի «Լոռեցի Սաքոյին». պատմվածքում նկարագրվում է տաղանդավոր ինքնուս նկարչի և քանդակագործի ողբերգությունը. Գրիգորն էլ Սաքոյի նման զոհ է գնում սնոտիապաշտությանն ու կրոնական նախապաշարմունքներին:

Լուրջ հետաքրքրություն են ներկայացնում Հ. Հակոբյանի այն գրվածքները, որոնք գետեղված են 1927 թ. լույս տեսած «Ագիտատորի հուշերից» գրքում: Այդ գրվածքները փաստորեն հուշեր են՝ իրական անձնավորությունների ու ռեալ իրադարձությունների մասին: Սակայն շատ կողմերով դրանք առնչվում են պատմվածքի ժանրին, ունենալով հանդերձ իրենց առանձնահատկությունները:

Ովքե՞ր են Հ. Հակոբյանի հիշյալ գրվածքների հերոսները, ի՞նչ իրադարձություններ ու կոնկրետ պատմական դեպքեր են նկարագրված գրանցում: Հենց միմիայն այս երկու հարցերի պատասխանն էլ պարզում է, թե որքան ակտուալ նշանակություն ունեն դրանք այսօր, մեր օրերում, երբ սովետական դրոշմների առջև դրված պատմավոր խնդիրներից մեկն է մեր երկրի ռևոլյու-

ցիոն անցյալի գեղարվեստական արտացոլումը: Հայտնի է, օրինակ, որ Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչներին՝ Ստ. Շահումյանի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Սպանդարյանի, Կամոյի և այլոց մասին մեր գրականության մեջ կամ շատ քիչ են, կամ որ ավելի ցավալի է, դեռևս չկան գեղարվեստական լիարժեք երկեր, մինչդեռ դրանք կարևոր նշանակություն կարող են ունենալ մեր երիտասարդ սերնդին հայրենասիրության, կոմունիստական սկզբունքայնության, ռևոլյուցիոն անձնվիրության ոգով դաստիարակելու ուղղությամբ:

Հ. Հակոբյանի «Ագիտատորի հուշերից» գիրքը առաջիններից մեկն է, ուր հաջողությամբ արտացոլված են Անդրկովկասի բոլշևիկների մղած պայքարի դրվագները, ուր գեղարվեստական վարպետությամբ գծված են Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Կամոյի և ուրիշների պորտրետները:

Գրքում ուշագրավ էջեր են նվիրված բոցաշունչ ռևոլյուցիոններ Ստ. Շահումյանի ռևոլյուցիոն գործունեությանը («Կազմակերպվեցինք», «Վլասուր»): Սրանցում Հ. Հակոբյանն իրեն նպատակ չի դրել նկարագրել Ստ. Շահումյանի ռևոլյուցիոն կյանքի ողջ ուղին, սակայն այն դրվագներն էլ, որոնք նա բնութի է և գեղարվեստորեն արտացոլել, բնութագրական են լենինյան տիպի ռևոլյուցիոն գործիչ Ստ. Շահումյանի համար:

«Կազմակերպվեցինք» երկի դեպքերը կատարվում են 1907 թվականին, երբ ռևոլյուցիոն ալիքն ապրում էր իր տեղատվությունը, երբ սոցիալ դեմոկրատական պարտիայի մենշևիկյան թևը լիկվիդատորական ճանապարհով գահավիժում էր դեպի ռևոլյուցիոն գործին լիակատար կերպով դավաճանելու ուղին, դեպի կոնտրռևոլյուցիայի լազերը: Այսպիսի պայմաններում, ահա, հետևելով լենինի ցուցումներին, բոլշևիկները ինտենսիվորեն աշխատում էին կրակի տակից հանել ռևոլյուցիոն խմբակները, անլեզու աշխատանքը զուգակցել լեզու հնարավորությունների հետ, պահպանել ու ամրապնդել ռևոլյուցիոն ուժերը ապագա ռևոլյուցիոն բախումների համար: Հենց այդ աշխատանքով է գլխովին տարված պատմվածքի հերոսը՝ Ստ. Շահումյանը: Հ. Հակոբյանը նկարագրում է մի փոքրիկ դեպք, թե ինչպես է Շահումյանը սովորական խնջույքի անվան տակ կազմակերպում է բոլշևիկյան-ռևոլյուցիոն խմբակի ժողով, ուր նա հանդես է գալիս տակտիկական հարցերում բոլշևիկյան տեսակետների պաշտպանությամբ: Հետաքրքիր են կոնսպիրատիվ այն մեթոդները, որ կիրառում են Ստ. Շահումյանի ռևոլյուցիոն կրակոտ խոսքին ծարավի խմրակի շարքային անդամները, հուզիչ է այն ջերմ սերը, որ նրանք տածում են իրենց ավագ ընկերոջ նկատմամբ, բայց ամենից հետաքրքրականը ինքը՝ Ստ. Շահումյանն է իր հմայիչ գծերով: Պատմվածքում մեր առջև կանգնում է պրոֆեսիոնալ ռևոլյուցիոնները, որ գիտե մոլորեցնել ցարական կառավարության լրտեսներին, անկեղծ ու ազնիվ ընկերը, որ առանձնակի քնքշությամբ է վերաբերվում իր մարտական ընկերներին, վերջապես բոցաշունչ տրիբունը, որ իր կենդանի խոսքով ընկերների սրտում վառ է պահում ռևոլյուցիոն պայքարի կրակը: Ըստ որում Հ. Հակոբյանը սոսկ անտարբեր պատմող չէ, նրա յուրաքանչյուր տողում երևում է այն վսեմ սերը, որ նա և նրա ընկերները տածում են Ստեփան Շահումյանի նկատմամբ: «Սրտով ուղում էինք, շատ էինք ուղում մի կտոր աղ ու հաց ուտել քեզ հետ»,— իրենց սերն այլ կերպ չկարողանալով արտահայտել, ասում են խմրակի անդամները Ստ. Շահումյանին: Վերջում հեղինակը սրտի խորը կսկիծով է խոսում Շահումյանի անժամանակ կորստյան մասին:

Եթե «Կազմակերպվեցին»-ում մենք տեսնում ենք Շահումյանին ռեուցիայի տեղատվության օրերին, ապա «Վլաստը» պատմվածքում ականավոր բոլշևիկը հանդես է դալիս արդեն ռեուցիոն վերելքի տարիներին՝ 1917—1918 թվականներին, երբ Լենինի և Ստալինի ստորագրած դեկրետով նա նշանակված էր Անդրկովկասի արտակարգ կոմիսար:

Մենշևիկյան տիրապետության օրերն են: Մենշևիկյան կառավարությունը Վրաստանը ծախել է կոնտրռեուցիոն ուժերին, սակայն բոլշևիկյան պայքարը մղվում է կյանքի բոլոր ճակատներում, այդ պայքարը ղեկավարում է արտակարգ կոմիսարը: Ահա նա անհերքելի փաստերով, անվախ կերպով մերկացնում է մենշևիկների դավաճանությունը: Կովկասյան բանակի երկրորդ համագումարում «ուր նախագահության մեջ բազմել են մենշևիկյան բասարները, ինչպես և էսենների լիդերները», փաստորեն Շահումյանն է իր հետևից տանում դահլիճը, ռեուցիոնացող մասսաներին: Հ. Հակոբյանը կարողացել է գծել զուսպ, բայց միաժամանակ իր տրամաբանության ուժով թշնամիների բոլոր ծրագրերը տապալող տրիբունի կերպարը:

Անգրադառնալով ականավոր ռեուցիոններ Սուրեն Սպանդարյանին («Ս. Սպանդարյանը խմբագիր») Հ. Հակոբյանը հատկապես շեշտում է այն սկզբունքայնությունը, որ պայքարի մեջ հանդես է բերել աննկուն բոլշևիկը: Սպանդարյանի խառնվածքի մեջ ամենաշեշտված գիծը հենց նրա անհաշտությունն ու անողորմությունն է եղել, երբ նա կռվել է նացիոնալիստական թույնը տարածող դաշնակցության ու նրա թերթուկների դեմ:

Հ. Հակոբյանը հաջողությամբ է ցույց տալիս նաև տաքարյուն, խիզախ, ռեուցիայի գործի համար մեռնելու պատրաստ Կամոյի հերոսական կերպարը: («Ջերմոցի վարունգը») Հ. Հակոբյանի պատկերմամբ Կամոն նմանվում է Ֆուրմանովի, Չապաևին: Կամոն մարքսիզմի թեորետիկ չէ, նա շատ հարցեր հասկանում է յուրովի, բայց Վ. Ի. Լենինի գործին, ռեուցիայի գործին ծառայելը Կամոյի տարերքն է, նա չի կարող ապրել առանց ռեուցիոն աշխատանքի, բայց նա ինքնանպատակ «կտրիճության», ինչպես հեղինակն է ասում, «էքսերի» կողմնակից չէ, ընդհակառակը, նրան թևավորողն այն գաղափարն է, որ նա իր գործունեությամբ խաբխրում է ինքնակալության հիմքերը, մոտեցնում ռեուցիայի հաղթանակի օրը:

Առանձնակի արժեք է ներկայացնում «Կաշմարը», ուր Հ. Հակոբյանը վերհիշում է Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած իրագարձությունները 1918 թվականին:

1918 թվականին ղեկավար աշխատանքով տեղափոխվելով Պլատիգորսկ, Հ. Հակոբյանը ոչ միայն ականատես է եղել, այլև ինքն ակտիվորեն մասնակցել է այն պայքարին, որ մղում էր այդ օրերին երիտասարդ Սովետական պետությունը միջազգային ինտերվենցիայի և երկրի ներսի կոնտրռեուցիոն ուժերի դեմ: Պատմվածքում կինոկադրերի նման իրար են հաջորդում դեպքերը՝ մեկը մյուսից օրհասական գոտեմարտերը: Պարտիայի և տեղական սովետական մարմինների ղեկավարությամբ ողջ Հյուսիսային Կովկասը, այդ թվում և Պլատիգորսկը, վճռական մարտեր է մղում միջազգային իմպերիալիզմի լակեյների, գեներալ Շկուրոյի և նրա նմանների դեմ: Այդ պայքարում ընկնում են ռուս ժողովրդի պանծալի զավակներ Անչիևսկին, Կրայնին, Դունակին, Ռուբինը: Ցնցող գույներով է նկարագրում Հ. Հակոբյանը այն եղեռնագործությունը, որ կատարում են դավաճան Սորոկինի նման ճիվաղները:

գաղտնի ձերբակալելով և գնդակահարելով քաղաքի պետական ու պարտիական ակտիվին: Սովետական կարգերի ուժն ու հմայքը գիտակցած աշխատավորական մասսաների ցասման նկարագրությունը պատմվածքի ամենահուզող մասն է: Այդ ցասումը հենց գրավականն է այն անձնագոհ նվիրվածության, որով մարտի էր նետվում յուրաքանչյուր մարտիկ քաղաքացիական կոիվների տարիներին:

«Սակայն բանվորների ցասկոտ ձայնը ինը դագաղների առաջ, վրիժառության հուրը աչքերին, նրանց երդումն ու կոչը թե՛

— Մենք այս օրը չենք մոռանա...

— Մենք այսօրվա վրեժը կհանենք նրանցից, որոնք տաքացրին Սարգիսի նման իժերին... մոռացնել է տալիս մեր ապրած կաշմարը... Կաշմարների կաշմարը՝ Պյատիգորսկում...»:

Մենք հնարավորություն չունենք մի առ մի խոսելու «Ագիտատորի հուշերից» ժողովածուի մեջ զետեղված բոլոր գործերի մասին, գրանցից յուրաքանչյուրը ունի յուր իրեն աշխատանքի մի փոքրիկ էտապ է ընդգրկում: Մի տեղ մենք իրեն՝ հեղինակին ենք տեսնում դեմ առ դեմ կանգնած իր տունը խուզարկության եկած ցարական ոստիկանության հետ՝ պրոֆեսիոնալ ունիվերսիտետներին վայել հավասարակշռված տակտով թշնամու բոլոր որոգայթներն ի դերև հանելիս («102-րդ հոգվածը, կամ Միխայի նամակը»): Մի այլ տեղ նկարագրվում է 1905 թ. ունիվերսիտետ անցքերը Բիֆլիսում («1905 թիվը»), մի ուրիշ տեղ սիրով ու հիացմունքով նկարագրվում է վրաց ազատասեր ժողովրդի պայքարը ցարիզմի դեմ («Քնթռահորսը») և այլն:

Հ. Հակոբյանը մտադիր է եղել շարունակել այս շարքը: Արխիվում պահպանվող փաստաթղթերում մենք տեսնում ենք հաջորդ երկերի վերնագրերը, ուրվագծեր ու էսքիզներ, նույնիսկ արդեն պատրաստ նյութեր: Դրանց թվին է պատկանում «Բռնկի լիրիզմը», ուր Հ. Հակոբյանը նկարագրում է այն աշխատանքը, որ նա վարել է Բիֆլիսի առևտրական բանկում: Այստեղ էլ հենց նա գծում է բանկային կապիտալի ներկայացուցչի կերպարը՝ իր դաժանությամբ, անբարոյականությամբ, դիշատչական հակումներով:

Դրանց թվին է պատկանում «Գրաշար Սանդրոն», ուր զգացված տողերով Հ. Հակոբյանը նկարագրում է կապիտալիստական հասարակության զոհերից մեկին, անտանելի ծանր աշխատանքի մեջ հյուծվող և մեռնող գրաշար բանվորին:

* * *

Հակոբ Հակոբյանի արձակի մեջ կարևոր տեղ են գրավում նրա ակնարկները, որոնք գրված են առավելապես քսանական թվականներին: Հասկանալի է, թե ինչու բանաստեղծը հատկապես քսանական թվականներին է ավելի շատ զրադվել ակնարկի ժանրով: Մեր երկրում սովետական կարգերի հաստատումից հետո Սովետական կառավարության և Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ողջ աշխատավորությունը ձեռնամուխ եղավ երկրի քայքայված տնտեսության վերականգնման և վերակառուցման աշխատանքներին: Երկրի անտեսական զարգացման իրականացմանը պարտավորվում էր մասնակցել յուրաքանչյուր սովետական քաղաքացի՝ անկախ նրա մասնագիտությունից: Այդ տարիներին սովետական գրողների առաջ դրված էր երկրի վերականգնման

աշխատանքների գեղարվեստական վերարտադրության պատվավոր խնդիրը՝ Ստեղծվում էին սովետական մարդկանց անձնվեր աշխատանքին նվիրված լայնակտավ երկեր, բայց առավելապես՝ փոքր կտավի երկերի՝ պատմվածքների, ակնարկների շարքեր, որոնք տասնյակներով տպագրվում էին պարբերական մամուլում, ընթերցող հասարակայնությանը ծանոթացնելով վերականգնման ու վերակառուցման աշխատանքների էնտուզիաստների փորձին ու աշխատանքային սխրագործությանը։ Ակնարկի ժանրն այդ տարիներին գրականության առաջատար ժանրերից մեկն էր։

Հայտնի է, որ քսանական թվականներին՝ սոցիալիստական շինարարության հերոսներին, առաջին սոցիալիստական նորակառույցներին Հ. Հակոբյանը նվիրել է իր ոգեշնչված բանաստեղծությունները և նշանավոր պոեմները («Բայլշեֆկ է Շիր-Կանալը», «Վոլխովստրոյ» և այլն), որոնք երկրի վերափոխման, սովետական ժողովրդի ազատ ու երջանիկ կյանքի համար սովետական մարդկանց մղած ստեղծագործական պայքարի ամենաոգեշունչ ներբողներն են սովետահայ գրականության մեջ։

Նույն ոգեշնչվածությունն ենք մենք զգում կարդալով Հ. Հակոբյանի ակնարկները՝ «Դնեպրոստրոյ», «Վերածնվող Աջարիստանը», «Բորժոմն ու իր գործարանները», «Թուրքիկ ակնարկներ», «Կոմունիստի խոհերից» և այլն։

Այս ակնարկներում Հ. Հակոբյանի սիրած գրական հնարանքը հակադրությունն է՝ Շրջելով Երևանի, Ալեքսանդրապոլի (Լենինական) փողոցներով («Թուրքիկ ակնարկներ»), Հ. Հակոբյանը հիշում է այդ բնակավայրերի ողբերգական անցյալը և այդ անցյալի ֆոնի վրա ուրվագծում նոր բարձրացող քաղաքները, ուր կարճ ժամանակամիջոցում դեռևս հնարավոր չի եղել շատ բան փոխել, ուր նորակառույց շենքերն ու լայն փողոցները դեռևս հատուկենտ են, սակայն նրանց բնակիչներից ամեն մեկի սրտում ծփում է շինարարական եռանդը, այն հսկայական պոտենցիալ ուժը, որ գրավականն է սովետական պայծառ գալիքի։ «Չէ՛, երջանիկ է մի երկիր, մի ժողովուրդ, որը հասկացել, ըմբռնել է իր կոշումը, իր էպոսի շրջանը՝ ձգտում է խաղաղ, շինարարական իդիլիկ կյանքի՝ ապագա սերնդի ու նրա կատարյալ երջանկության համար»։ Այսպես է վերջացնում իր ակնարկը Հ. Հակոբյանը և այս մոտիվը, որպես հիմնական մոտիվ, հնչում է նրա բոլոր ակնարկներում։ «Վերածնվող Աջարիստանը» ակնարկում գեղարվեստական նկարների պանորամի նման մեր աչքերի առջևով անցնում են կյանքի վերածնության պատկերները։ Ահա նորակառույց դպրոցները, ուր դարբնվում է Աջարիստանի կուլտուրան ու լուսավորության գործը, ահա հատկապես գյուղի աշխատավորների համար քաղաքում կառուցված հյուրանոցները, ուր լեռնային գյուղերից իջած երկրագործը ոչ միայն հնարավորություն ունի իրեն սեփական հարկի տակ զգալու, այլև ճաշակում է ժամանակակից կուլտուրայի քաղցրությունները, ըմբռնում բանվոր դասակարգի և գյուղական աշխատավորության անխարդախ կապի ուժը։ Ընթերցողը հեղինակի հետ շրջում է «չքնաղ Բաթումի» փողոցներով, նավամատուցներով, քաղաքի տեսարժան վայրերով ու հիանում առաջին հերթին երջանկության այն երփներանգ շողերով, որոնցով լցված է աջարական ժողովրդի ամեն մի գավակի հոգին։

Սակայն իր ակնարկներում Հ. Հակոբյանը սոսկ էքսկուրսավար չէ, որ ընթերցողի ձեռքից բռնած շրջում է հին ու նոր ճարտարապետական հուշար-

ձանների մեջ: Հ. Հակոբյանի ակնարկներից մի քանիսը կոնկրետ աշխատանքային պրոցեսների նկարագրություններ են, որոնց մեջ ևս իր ստեղծագործության հիմնական օբյեկտը դարձնելով մարդուն, Հ. Հակոբյանը չի քաշվում սուր քննադատության ենթարկել աշխատանքի պրոցեսում նկատվող թերությունները՝ բանվորների աշխատանքային պայմանները լավացնելու նպատակով: Այդ տեսակետից հետաքրքրական են «Բորժոմն ու իր գործարանները», «Կոմունիստի խոհերից», «Թվերի պոեզիան» ակնարկները:

Հ. Հակոբյանի գրիչը ակնարկներում բանաստեղծական կատարելության է հասնում, երբ նա նկարագրում է սոցիալիզմի առաջին գիզանտ նորակառույցները: Այդ տիպի ակնարկներից է ահա «Դնեպրոստրոյը», որի պաթոսը Հ. Հակոբյանի բանաստեղծություններից մեզ ծանոթ պաթոսն է՝ մարդու և բնության պայքարի, այդ պայքարում շինարար, ստեղծագործ մարդու հաղթանակի պաթոսը:

Հ. Հակոբյանի համոզմամբ թվերն անգամ ունեն իրենց յուրօրինակ պոեզիան, միայն թե գրողը կարողանա թվերի տակ ընկալել ու գեղարվեստորեն բացել կյանքը, մարդկային հարաբերությունները: Հիրավի, «Դնեպրոստրոյ» ակնարկում Հ. Հակոբյանը հենց գեղարվեստորեն բացում է թվերի նշանակությունը, ցույց է տալիս այն առատությունն ու երջանկությունը, որ բերում են իրենց հետ Դնեպրոգէսի նման գիզանտ կառուցումները:

* * *

Հ. Հակոբյանի արձակի մեջ նշանակալից տեղ են գրավում նրա ընդարձակ ինքնակենսագրությունն ու հուշերը՝ ինչպես ժամանակակից անվանի ռուս լյուցիոներների, այնպես նաև մի շարք գրողների և հասարակական գործիչների մասին:

Հ. Հակոբյանի ինքնակենսագրությունը հեղինակի կենդանության օրով լույս է տեսել միայն հատվածաբար, այն էլ առաջին հատվածը, որ վերաբերում է գրողի մանկության և պատանեկության տարիներին: Առավել լրիվ ինքնակենսագրությունը, որի դեպքերը Հ. Հակոբյանը հասցնում է մինչև 1911 թվականը, առաջին անգամ հրատարակվել է 1951 թ. Հայպետհրատի լույս ընծայած «Երկեր» ժողովածուի մեջ: Պետք է նշել, որ այդտեղ տեղ են գտել մի շարք անճշտություններ և անհարկի կրճատումներ: Նույնը պետք է ասել նաև Հ. Հակոբյանի հուշերի մասին, որոնք նույնպես հեղինակի կենդանության ժամանակ չեն գետեղվել որևէ ժողովածուի մեջ և որոնց մի մասն էլ առաջին անգամ խմբագրված հրատարակվել է հիշյալ հետ մահու ժողովածուում: Հուշերի մի բավական ծավալուն մասն էլ առհասարակ անտիպ է մնացել:

Հ. Հակոբյանի ինքնակենսագրության առաջին արժանիքն այն է, որ այն ամենից հավաստի աղբյուրն է մեր գրողի կյանքի մի բավական մեծ հատվածի (1866—1911) մասին: Ինքնակենսագրությունից մենք իմանում ենք նախ և առաջ հեղինակի կյանքի պարբերացումը մինչև սոցիալիստական ռեակցիայի վերջին տարիները:

Ինքնակենսագրության յուրաքանչյուր բաժնում, ինչպես Ս. Գորկին իր լուսավոր ինքնակենսագրական երկերում, Հ. Հակոբյանը չի սահմանափակվում իր կյանքի միագիծ նկարագրությունը տալով: Ընդհակառակը, այս երկի մեծագույն արժանիքը հենց այն է, որ այստեղ համապատասխանորեն տրվում է ժամանակի հասարակական-քաղաքական իրադրության ընդհանրական պատ-

կերը: Եթե, ասենք, առաջին բաժնում քնարական տողերի մեջ, որոնց միախառնվում են հրաշալի երգիծական երանգներ, Հ. Հակոբյանը մեզ է ներկայացնում նահանգական կենտրոն Գլխավոր իր կիսանահապետական կենցաղով, շրջապատի մարդկանց (հոր, մոր, ուսուցչի, տեղական քահանայի և այլն) ուղղակի վիպական կերպարներով, տալիս է փողային հարաբերությունների և սնոտիապաշտական խավարամոլության ճիրաններում գալարվող, մինչև կյանքի վերջն էլ իր սեփական տունն ու տեղը երազող համբար արհեստավորի կյանքի պատկերը, ապա երկրորդ, երրորդ բաժիններում մենք զգում ենք Թիֆլիսի, ապա և Վարդանաբերական խոշոր կենտրոն դարձող Բաքվի կյանքը անցյալ դարի 80—90-ական թվականներին՝ նկարված գեղարվեստագետի վրձինով: Իսկ չորրորդ բաժինը ինքնին մի գեղարվեստական պատմություն է Անդրկովկասի կենտրոններում XX դարասկզբին խմորվող ռևոլյուցիոն շարժման մասին, որի բարձրակետը ինքնակենսագրության մեջ 1905 թվականի ռևոլյուցիոն դեպքերն են: Այստեղ մեզ համար պարզվում են ռևոլյուցիոն շարժման տասնյակ մանրամասնություններ, ընթերցողը հեղինակի հետ մտնում է լեզալ ու անլեզալ բոլշևիկյան թերթերի խմբագրությունները, մասնակցում բոլշևիկների կազմակերպած ռևոլյուցիոն ելույթներին ու միտինգներին, վերահասու լինում այն ծանր և միաժամանակ արդյունավետ աշխատանքին, որ ձեռնարկում են Անդրկովկասի բոլշևիկները ստույգիական ռեակցիայի դաժան տարիներին: Հ. Հակոբյանի ինքնակենսագրության արժանիքները սրանցով չեն սահմանափակվում: Մեկ հոգվածի սահմաններում հնարավոր չէ մանրամասն վերլուծել այդ ուշագրավ երկը: Մենք չիսուեցինք երկի այն հետաքրքիր էջերի մասին, ուր հեղինակն իր կարծիքներն է հայտնում արվեստի և գրականության, արվեստի ու կյանքի փոխհարաբերության հարցերի մասին և այլն:

Ինքնակենսագրության հետ սերտորեն առնչվում են նաև Հ. Հակոբյանի հուշերը, որոնք կարելի է բաժանել երկու մասի. հուշեր ժամանակի խոշոր ռևոլյուցիոն գործիչների մասին և հուշեր ու տպավորություններ հայ կլասիկ գրականության մի շարք ներկայացուցիչների մասին: Առաջին շարքի մեջ են մտնում Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանի, Մելիք Մելիքյանի, Միլիտոն Ֆիլիպյի և ուրիշների մասին գրված հուշերը, իսկ երկրորդ շարքի մեջ մտնում են Հովհ. Թումանյանին, Ղ. Աղայանին, Պ. Պոռչյանին, Գ. Սունդուկյանին, Ռ. Պատկանյանին և այլ գրողներին նվիրված հուշերը, որոնց մի մասը, ուրիշ գործերի նման, մինչ օրս մնացել են անտիպ:

Ժամանակի ռևոլյուցիոն գործիչներին նվիրված հուշերն առանձնակի արժեք են ներկայացնում: Կարդալով, օրինակ, «Մեծ ագիտատորը՝ Մելիք Մելիքյան» հուշը, ընթերցողը միանգամայն ռեյենֆ կերպով պատկերացնում է ռևոլյուցիոն պրոպագանդիստական այն աշխատանքը, որ տարել են բոլշևիկները մասսաների մեջ: Միաժամանակ հուշի մեջ մի քանի ընդհանուր գծերով գծագրվում է իրեն՝ Մելիք Մելիքյանի, այդ անխոնջ բանվոր-ագիտատորի կերպարը: Հ. Հակոբյանը հատուկ ընդգծում է այն անձնվիրությունը, որ հանդես է բերել Մելիքյանը ռևոլյուցիոն աշխատանքի մեջ, իզուր չէ, որ իր բանաստեղծություններից մեկում Հ. Հակոբյանը Մ. Մելիքյանին անվանում է «գյուղ ու քաղաքի շրջիկ դերվիշ»: Հուշի մեջ մենք ծանոթանում ենք ահա այդ «դերվիշի» անդադրում կյանքին. նա այսօր այստեղ, վաղն արդեն մի այլ տեղ բանվորներին հասկանալի, պարզ բառերով քարոզում է ռևոլյուցիայի լենին-

յան ուսմունքը: Եվ ոչ մի դժվարություն, ոչ մի վտանգ չեն կարողանում ընկճել աննկուն բուլշևիկի հոգին:

«Աննկուն բուլշևիկը—Միլիտոն Ֆիլիա» հուշի մեջ Հ. Հակոբյանը պատմում է մեկ այլ բուլշևիկի՝ Ֆիլիայի կյանքի պատմությունը, թե ինչպես է նա մասնակցում Գամոյի կազմակերպած ռևոլյուցիոն ելույթներին, ինչպես և ճարպկությամբ ազատվում ցարական ժանդարմների ձեռքից և հենց դատարանի դահլիճից փախչելով տեղափոխվում արտասահման, ուր էմիգրացիայի մեջ էլ մասնակցում է ռևոլյուցիոն շարժմանը Ռուսաստանում և Անդրկովկասում: Գծելով նրա կյանքի ուղին ռևոլյուցիոն առաջին ելույթներից մինչև մահը, որ տեղի է ունենում Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, բայց որը հետևանք է բանտերում ու էմիգրացիայի մեջ կրած դաժան զրկանքների, Հ. Հակոբյանը կենդանի օրինակ է տալիս մարդկային կամքի, ռևոլյուցիոն դիմացկունության:

Եվ այսպես, բուլշևիկ ռևոլյուցիոններների մասին գրած յուրաքանչյուր հուշի մեջ ժամանակի իրադրության պատկերը տալու հետ միասին, Հ. Հակոբյանը շեշտում է մեր անցյալի փառապանծ գործիչների խառնվածքի այս կամ այն գիծը:

Գրողների մասին գրված հուշերը խոշոր նշանակություն են ներկայացնում հատկապես այն տեսակետից, որ առավելապես սրանցում է, որ Հ. Հակոբյանը շարադրում է իր կարծիքները կլասիկ գրողների ժառանգության, նրանց ունեցած տեղի ու դերի և առհասարակ գրականագիտական բազմաթիվ այլ հարցերի մասին: Էլ չենք ասում, որ այդ հուշերից յուրաքանչյուրի մեջ մեր կլասիկ գրողներից ամեն մեկը լայնորեն բնութագրվում է որպես մարդ՝ իր նախասիրություններով, իր աշխարհայացքով, կյանքի երևույթների վերաբերյալ ցուցաբերած իր վերաբերմունքով:

Ղ. Աղայանի մասին Հ. Հակոբյանի հուշը կարդալով, զգում ես, թե որքան խորը, որքան բազմակողմանիորեն պետք է ճանաչել մարդուն՝ նրա մասին ընդհանրացնող գաղափար տալու համար, այնպիսին, ինչպիսին տալիս է Հ. Հակոբյանը այս ինքնատիպ երկի մեջ:

Ղազարոս Աղայանի կյանքի պատմություն շարադրելը չի եղել Հ. Հակոբյանի նպատակը, նա միմիայն պատմում է Աղայանի հետ ունեցած իր մի բանի հանդիպումների մասին: Բայց բանն էլ հենց այն է, որ այդ բոլորը նա չի պատմում էմպիրիկ մանրամասներով և սառն անտարբերությամբ: Նա գրում է իր ամենասիրելի մարդկանցից մեկի մասին և առիթը չի փախցնում իր սերն արտահայտելու քնարական հրաշալի զեղումների մեջ, զեղումներ, որոնք տեղ-տեղ հասնում են բանաստեղծական բարձր արվեստի:

Թե ինչով է բացատրվում Հակոբյանի անսահման սերը Ղազարոս Աղայանի նկատմամբ, միանգամայն հասկանալի է դառնում վերոհիշյալ հուշից: Հ. Հակոբյանի տածած սերը զուտ անձնական, ինտիմ մտերմության հետևանք չէ: Ուրեմն ո՞րն է Աղայանի այն գիծը, որ Հ. Հակոբյանին գրավել, ձգել է դեպի իրեն:

Հուշի մեջ մենք կարդում ենք Աղայանի բնութագիրը. «Յոթ տասնյակ տարիների ընթացքում մնաց զուտ ոսկու նման մաքուր, գոհարի նման փայլուն և Ղ. Աղայանի նման անկեղծ»... «Իսկ կարդացել եմ «Մուրճ»-ում նրա «Իմ կյանքի զխավոր դեպքերը» վերնադրով հուշերը և հիացել նրա անկեղծությամբ ու խիզախությամբ»:

Սակայն այս բոլորն, իհարկե, խնդրի մի կողմն է, լուկ մարդկային անկեղծությունը և ստեղծագործական խիզախությունը չէ, որ Ղ. Աղայանին դարձրել է հայ պրոլետարական գրականության հիմնադրի սիրելին:

Ղազարոս Աղայանը Հ. Հակոբյանի ամենասիրելի անձնավորություններից մեկն է նախ և առաջ, որպես գրող, մեր կլասիկ գրականության այն ներկայացուցիչը, որն իր նախասիրություններով, իր քաղաքական-հասարակական հայացքներով ամենից շատ է մոտենում գլխովին ռևոլյուցիոն գործունեության և պրոլետարական գրականության ձևավորման հոգսերով տարված պոետին: Եվ այդ, իրոք, այդպես է, պատահական չէ, որ իր կյանքի վերջում Ղ. Աղայանը ընդհուպ մոտենում է բոլշևիկյան պարտիայի գործիչներին: Պատահական չէ, որ Աղայանը երկրորդ Պետական Դոմայի ընտրությունների ժամանակ մտել է բոլշևիկների ցուցակի մեջ որպես պատգամավոր: Վերջապես նա ակտիվորեն մասնակցել է բոլշևիկների կազմակերպած միտինգներին: Այդ մասին Հ. Հակոբյանը գրում է. «Յարի հոկտեմբերյան մանիֆեստից հետո Ղազարոսն արդեն մեզ հետ էր, որպես համակրող: Նա կանոնավոր, համարյա ամեն օր, մասնակցում էր այն մասսայական բացօթյա միտինգներին, որ կազմակերպում էինք մենք, բոլշևիկներս՝ Վերայում — աղյուսի գործարանի մոտ և երբեք չէր հաճախում մենշևիկների միտինգներին, որ տեղի էին ունենում նախալովկայի հրապարակում»:

Հ. Հակոբյանի մասին ժամանակին տարածված են եղել կարծիքներ, թե իրր իր և ժամանակակից գրողների անձնական փոխհարաբերությունները խիստ կերպով անդրադարձել են նրա գնահատականների վրա, որ նա տվել է այս կամ այն գրական գործին: Ծանոթանալով հուշերին՝ ընթերցողը հանգում է այն եզրակացության, որ վերոհիշյալ ասեկոսները որևէ իրական հիմք չունեն: Ավելին, անկախ գրողի հասարակական քաղաքական համոզմունքներից Հակոբ Հակոբյանը նրա մասին գրելիս աչքի առաջ է ունենում նրա ստեղծագործության օբյեկտիվ նշանակությունը մասսաների դաստիարակության գործում: Այդ է պատճառը, որ նա այնքան բարձր է գնահատում քննադատական ռեալիզմի ստեղծած առաջավոր գրականությունը: Այդ բանը ակներևորեն երևում է այն գնահատականներից, որ նա տալիս է Պատկանյանին, Պռոշյանին, Թումանյանին, Սունդուկյանին և մեր այլ կլասիկներին: Բայց և անողորմ կերպով քննադատում է այն գաղափարական թերությունները, նացիոնալիստական մտայնության երանգները, որ մերթ րնդ մերթ երևում են այս կամ այն գրողի (օրինակ՝ Պատկանյանի) ստեղծագործության մեջ:

Առհասարակ խոսելով այս կամ այն գրողի, այս կամ այն երկի արժեքի մասին, ինչպես հոգվածներում, այնպես նաև հուշերում Հ. Հակոբյանը խնդրին մոտենում է գրական երկը գնահատելու գրականագիտական ճիշտ շափանիչով, շեշտը դնում է երկի ժողովրդայնության և նրա օբյեկտիվ արժեքի վրա՝ մասսաներին առաջավոր գաղափարներով դաստիարակելու գործում: Դրանով էլ հենց բացատրվում է, որ ամենևին էլ չի ունի չհամաձայնվելով այս կամ այն գրողի քաղաքական հայացքների հետ, Հ. Հակոբյանը չի զլանում բարձր գնահատել գրական երկը, եթե այն օբյեկտիվորեն քննադատական խոսք է բուրժուական հասարակության հասցեին՝ խոսք, ուր բարձր գաղափարն արտահայտված է գեղարվեստական ուժով: Երբ կարդում ենք Ռ. Պատկանյանի, Պ. Պռոշյանի, Հ. Թումանյանի, Գ. Սունդուկյանի և մեր մյուս կլասիկների մասին գրած Հ. Հակոբյանի հուշերը, միանգամից աչքի է զարնում այն նույ-

նությունը, որ կա ժամանակին հայ մարքսիստ գրականագետների կողմից բուլշևիկյան մամուլի էջերում այդ գրողներին տված հակիրճ, բայց միաժամանակ ընդհանրացնող գնահատականների և Հ. Հակոբյանի տված գնահատականների միջև: Ղ. Աղայանին Հ. Հակոբյանը գնահատում է այնպես, ինչպես իր ժամանակին գնահատել է Ստ. Շահումյանը, բարձրացնելով նրա ստեղծագործության լավագույն, արժեքավոր կողմերը, միաժամանակ քննադատելով նրա աշխարհայացքի, նրա քաղաքական հայացքների սուսմունսփուկությունն ու ուտոպիականությունը:

Հովհ. Թումանյանը Հ. Հակոբյանի համար հայ ժողովրդի աշխատավորական խավերի կյանքի ձգտումների, երազանքների բանաստեղծն է, «հրաշալի պոեմների, լեգենդների և բանաստեղծությունների հեղինակ»: Երբ Հ. Հակոբյանը խոսում է Թումանյանի արվեստի կատարելության մասին, նրա ոգևորությունը հասնում է բարձր նոտաների, զգում էս, որ Հ. Հակոբյանը հույարտանում է իր դրշակցի հոյակապ արվեստով:

Հակոբ Հակոբյանը, խոսելով Գ. Սունդուկյանի մասին, (ի դեպ, ասենք, որ Գ. Սունդուկյանին նվիրված հուշը անտիպ է) գրում է.

«Այդքան տաղանդավոր, այդքան սիրողարար վերաբերվել դեպի Թիֆլիսի կյանքն ու նրա աշխատավորների վիճակը — դա կարող էր միայն Թիֆլիսի վրա սիրահարված մաքալաքի Սունդուկյանը: Անշուշտ դասակարգային պայքարի ջիղն ուներ անդրանիկ հայ դրամատուրգը, օժտված շար ու բարիի հասկացողությամբ, ու էս միշտ մտածում էի, եթե նա իր խստությամբ ու ճշտապահությամբ հանդես գար 1900 թվականից հետո, անշուշտ մեր գրականությանը կտար դասակարգային պայքարի փնտրիկ նմուշներ»:

Այստեղից դժվար չէ հասկանալ, որ Հ. Հակոբյանը Գ. Սունդուկյանի անմահ «Պեպո»-ի ամենամեծ արժանիքը տեսնում է Ա. Մոսվյանի բառերով ասած՝ «նորագույն պատմության էջերից մեկի»՝ այսինքն՝ առևտրաարդյունաբերական կապիտալի զարգացման հետևանքով մանր սեփականատիրական խավերի քայքայման պրոցեսի ռեալիստական տաղանդավոր արտացոլման մեջ:

Բավարարվենք այսքանով, քանի որ ներկա հոգվածում մեր խնդրից դուրս է հանգամանորեն մեկնաբանել Հակոբյանի գրականագիտական հայացքները, որոնց մեջ կան նաև վրիպումներ՝ որոշ երկերի գնահատման և առանձին հարցերի լուսաբանման գործում:

* * *

Այժմ մի քանի խոսք Հակոբ Հակոբյանի հոգվածների մասին, որոնք օրգանապես կապված են նրա գրական-գեղարվեստական ստեղծագործության և ռևոլյուցիոն գործունեության հետ: Ինչպես իր լավագույն գեղարվեստական ստեղծագործություններով, իր հոգվածներով ևս, Հ. Հակոբյանը միջամտել, արձագանքել է ժամանակի հրատապ հարցերին: Հոգվածները, որոնք դրված են տարբեր ժամանակ և տարբեր առիթներով, առաջին հերթին վկայում են այն լայն տեսադաշտի մասին, որ ունեցել է բանաստեղծը: Ժողովրդական դպրոցի ծրագրի հարցը, այս կամ այն բուրժուական-հետադիմական լրագրի հերյուրանքները՝ Կոմունիստական սպարտիայի գործիչների հասցելին, բանվորա-

կան մամուլի հաջողությունները, պրոլետարական գրականության ստեղծման ու ծաղկման անհրաժեշտությունը, դաշնակցական ավանտյուրիստների շահատակությունները, ազգամիջյան կոտորածի հրահրման նրանց «ազգասիրական» մոլուցքը, Հոկտեմբերյան ռեոլյուցիայից հետո Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված անդրկովկասյան կոնտրռեոլյուցիոն մամուլի կեղտոտ պրոսպագանդը, վերջապես արվեստի-գրականության, էսթետիկայի հարցերը — սրանք բոլորն այնպիսի խնդիրներ են, որոնց կողքով չէր կարող անտարբեր անցնել բոլշևիկ բանաստեղծը:


Եվ իրոք, երբ թերթում ենք Հ. Հակոբյանի հոդվածները, դարձանայի կերպով աչքի է ընկնում հեղինակի քաղաքական ակտիվությունը:

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների ընտրության կապակցությամբ 1906 թվականին «Աշխատանք» շաբաթաթերթում Հ. Հակոբյանը հանդես է գալիս «Ազգային, թե՛ ժողովրդական դպրոց» հոդվածով: Կարևոր չէ, որ հոդվածի առիթը Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների ընտրությունն է: Կարևորն այստեղ այն ընդհանրացումներն են, որ անում է Հ. Հակոբյանը, այսպես կոչված, «ազգային կուլտուրայի» ու հայ աշխատավորության կուլտուրական վիճակի մասին:

Հոդվածում Հ. Հակոբյանը մեջ է բերում բուրժուական իրերալ և պահպանողական հոսանքների ներկայացուցիչների կարծիքները ազգային կրթության, ազգային կուլտուրայի մասին և դրանք իրար համեմատելով հասնում է այն տրամաբանական եզրակացությանը, որ «ազգասիրական» ճառերով իրենց լսակիցների բուրժուական էությունը սքողող այդ հոսանքները հավասարաչափ այն խոշոր բուրժուազիայի լակեյներն են, քանի որ «ազգ» ասելով նրանք նկատի ունեն լուրջ չափերին և ոչ աշխատավորական մտածանքին, որոնք տառապում են «ազգասեր» կապիտալիստների և կղերականության ձեռքին:

Նույն թվականին մի այլ պարբերականում տպագրված «Պրոլետարի հիշատակարանից» հոդվածում Հ. Հակոբյանն անարգանքի սյունին է գամում հայ խոշոր բուրժուազիայի լակեյներին, դաշնակցականներին, որոնք վաղուց են անցել «վայրագությունների շահին ու սահմանը»: Հոդվածը սուր ծայրով ուղղված է և՛ դաշնակցականների դեմ, որոնք բարբարոսական լիտի վերաբերմունք էին հանդես բերում ժողովրդի նկատմամբ (որպիսի օրինակներ հոդվածում բերվում են), և՛ այդ վայրագությունները, ըստ էության, պաշտպանող կղերա-պահպանողական ու այսպես կոչված «ազատամիտ» հոսանքի ներկայացուցիչների դեմ: Քննադատելով վերջիններիս, այստեղ էլ, ինչպես նախորդ հոդվածում, Հ. Հակոբյանը փաստերով ցույց է տալիս, որ էական տարբերություն չկա դրանց և դաշնակցականների միջև, որ վերջին հաշվով բոլորն էլ շահագործող դասակարգերի գաղափարախոսներն են:

1917 թվականին «Պայքար» սոցիալ դեմոկրատական թերթում տպագրվել է Հակոբյանի «Մեր հույսը մեզ վրա» հոդվածը, ուր արծարծվում է հայ գրողի և հայ գրականության նյութական ապահովության հարցը, մի հարց, որ բազմիցս արծարծվել է հայկական մամուլի էջերում: Սակայն այս արտաքինից միանգամայն «անմեղ» թվացող հարցին էլ Հ. Հակոբյանը չի մոտենում նեղ պրոֆեսիոնալիզմի տեսակետից: Այստեղ ևս բոլշևիկ բանաստեղծն առաջ է



քաշում պրոլետարական գրականության, նացիոնալիստական, կեղծ ազգասիրական մտայնությունից զերծ գրականության հարցը:

Եթե դաշնակցության տխրահռչակ պարագլուխներից մեկը Ա. Ահարոնյանը, կեղծավորաբար, իբր թե խոսելով «տառապյալ» հայ ժողովրդի անունից, պահանջում է, որ հայ գրողը նույնպես «տառապի ծով կարիքի մեջ» և ստեղծի «ազգի», «ցեղի» ողուն հարազատ տառապանքի երգը, եթե, մյուս կողմից, անկումային գրականության ներկայացուցիչները գտնում էին, որ գրականությունը կուշտ փորի գործն է և նրա կոշումը, այսպես կոչված, «գեղեցիկ» արվեստի մատուցումն է կյանքի տերերին, ապա հայ պրոլետարական գրականության հիմնադիրը տրամադծորեն հակառակ կարծիք է պաշտպանում: Նա իրավացիորեն գտնում է, որ գրականության զարգացման այս երկու ճանապարհներն էլ անպետք են պրոլետարական գրականության համար, «որովհետև ինչպես ամեն մի հարցում, նույնպես և այս դեպքում գիտակից պրոլետարիատը ունի իր ուրույն, իր որոշ, բուրժուական կամ մանր-բուրժուական տեսակետներին հակառակ պրոլետարական տեսակետը»:

Առանձնակի նշանակություն ունեն Հ. Հակոբյանի այն հոդվածները, որոնք գրված են 1918—1920 թվականներին, այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանում հաղթանակել էր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, իսկ Անդրկովկասի ժողովուրդները ղեկս հեծում էին կոնտրռևոլյուցիոն կառավարությունների, Ադրբեջանում մուսավաթականների, Վրաստանում մենշևիկների և Հայաստանում դաշնակցականների տիրապետության տակ: Այդ հոդվածները, որ տպագրվել են առավելապես բոլշևիկյան «Բանվոր», «Բանվորի կոիվր», «Պահակ» թերթերում, մեծամասնաբար ուղղված են դաշնակցության և նրա կեղտոտ թերթիկների դեմ, որոնք պրովակատորական ստեր և յուտանքներ էին թափում նորաստեղծ Սովետական պետության դեմ: «Աշխատավորը աշխատում է», «Զեր ճիգերը իզուր են», «Մամուլ», «Բթամբություն», «Թե՛ քծնանք», «Շնչթանը Մեֆիստոֆելի ղզեստում», «Միակ ելքը» և մի շարք նման հոդվածները բոլշևիկյան սկզբունքայնության, թշնամունկատմամբ ունեցած անողորմության և քաղաքացիական համարձակության վառ օրինակներ են:

Անդրկովկասում սովետական կարգերի հաստատումից հետո Հ. Հակոբյանի ուշադրությունն ամբողջովին բեկովում է երկրի վերականգնման հարցերի վրա: Փոխվում է նրա հոդվածների թեման, այժմ էլ, առաջվա կրքոտությամբ ու պաթոսով, նա ողջունում է հաղթանակած պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությանը («Ողջուն ազատագրվածներին»), փառաբանում ազատարար Կարմիր Բանակը («Հաղթական Կարմիր Բանակը»), պայքարի կոշ անում բնդեմ բուրժուական ինտելիգենցիայի սարսուռածի և տնտեսական սպեկուլյացիայի, քաղաքական սուր հոդվածներ է գրում միջազգային կոնտրռևոլյուցիոն ինտերվենտների դեմ և այլն:

Սակայն այս հարցերը մանրամասն մեկնարանելը դուրս է ներկա հոդվածի սահմաններից: